ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2021թ. N 440-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԿԱԳ ՋԵՐՄՈՒԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Լ. Ս. ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թ. հոկտեմբերի 4-ի N 72-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 2088-Ա հրամանը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «զ» և «ժը» կետերով՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ջերմուկի տարածքային բաժնի գործունեության դադարեցմամբ և հաստիքի կրճատմամբ պայմանավորված ս/թ նոյեմբերի 17-ին զբաղեցրած պաշտոնից ազատել բաժնի պետ Լուսիկ Սարիբեկի Սաղաթելյանին:

2. Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնին՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան Լ. Ս. Սաղաթելյանին վճարել արձակման նպաստ նրա մեկ ամսվա միջին աշխատավարձի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2021 նոյեմբերի 17
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2021թ. N 441-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ՊԱՇՏՈՆԻ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.1-12) ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3–րդ մասի և 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 2088-Ա հրամանով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում կատարված լրացմանը համապատասխան՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2008 թվականի դեկտեմբերի 4-ի N 04-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի յուրաքանչյուր ենթախմբի ընդհանուր նկարագրի հիման վրա հաստատել Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի պաշտոնի անձնագիրը (ծածկագիր՝ 3.1-12)՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2021 նոյեմբերի 17
Ջերմուկ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ
համայնքի ղեկավարի 2021 թ. նոյեմբերի 17-ի
թիվ 441-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ

3.1-12

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) առաջատար մասնագետի (այսուհետ՝ Առաջատար մասնագետ) պաշտոնը ընդգրկվում է համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների առաջին ենթախմբում:

2. Առաջատար մասնագետին «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը (այսուհետ՝ աշխատակազմի քարտուղար):

II. ՊԱՇՏՈՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ա. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌՈՒՄՈՎ

3. Առաջատար մասնագետը անմիջականորեն ենթակա և հաշվետու է աշխատակազմի քարտուղարին:
4. Առաջատար մասնագետը չունի իրեն ենթակա աշխատողներ
5. Առաջատար մասնագետը՝
   ա/ չունի աշխատանքների կազմակերպման, ծրագրման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ
   բ/ կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարականները
   գ/ պատասխանատվություն է կրում իրավական ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու համար
6. Առաջատար մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է աշխատակազմի առաջատար կամ 2-րդ կարգի մասնագետներից մեկը՝ աշխատակազմի քարտուղարի հրամանով:

Բ. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՈՒՄՈՎ

7. Առաջատար մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը:

Գ. ՇՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՒՄՈՎ

8. Առաջատար մասնագետը՝
   ա/ աշխատակազմի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում
   բ/ աշխատակազմի աշխատողների և պաշտոնատար անձանց հետ շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ՝ իր լիազորությունների շրջանակներում
   գ/ աշխատակազմից դուրս շփվում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ
   դ/ աշխատակազմից դուրս որպես ներկայացուցիչ հանդես գալու լիազորություններ չունի:

Դ. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՄԱՆ ԱՌՈՒՄՈՎ

9. Առաջատար մասնագետը՝
   ա/ աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է խնդիրների լուծմանը և գնահատմանը
   բ/ բարդ խնդիրների բացահայտմանը, դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին մասնակցելու լիազորություններ չունի

Ե. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌՈՒՄՈՎ

10. Առաջատար մասնագետը՝
ա/ ունի առնվազն միջնակարգ կրթություն,
բ/ ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին», «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Պետական տուրքի մասին», «ՀՀ պաշտոնական փաստաթղթերը ապոստիլով վավերացնելու մասին» ՀՀ օրենքների, ՀՀ ընտանեկան օրենսգրքի, աշխատակազմի կանոնադրության, ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
գ/ տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,
դ/ ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
ե/ իր պաշտոնի անձնագրով նախատեսված դեպքում տիրապետում է (ազատ կարդում և կարող է բացատրվել) օտար լեզվի (լեզուների):

III. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

11. Առաջատար մասնագետը՝
ա/ սահմանված կարգով իրականացնում է բնակչության քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումները
բ/ մասնակցում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման դիմումների ընդունման գործընթացին. օրենքով սահմանված ժամկետներում ուսումնասիրում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման համար տրված դիմումները, պարզաբանում դրանց բողոքարկման ժամկետները և կարգը
գ/ մասնակցում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման վերաբերյալ խորհրդատվության տրամադրման գործընթացին.
դ/ իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման վկայականների կրկնօրինակների, տեղեկանքների և այլ փաստաթղթերի թղթային կրիչի վրա տրամադրման աշխատանքներին.
ե/ ապահովում է թղթային արխիվի պահպանումը և թվայնացման աշխատանքները.
զ/ իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության (այսուհետ՝ Գործակալություն) լիազորությունների շրջանակներում ծառայությունների մատուցման դիմումների ընդունման գործընթացը:
է/ քաղաքացիական կացության ակտերի գրանցման նպատակով համապատասխան անձից պահանջում է լրացուցիչ տեղեկություններ և անհրաժեշտ փաստաթղթեր.
ը/ պահանջում է այլ սպասարկման կենտրոնների թղթային արխիվում պահպանվող քաղաքացիական կացության ակտերի գրանցման և դրանց առընչվող այլ գործառույթների կատարման նպատակով պահանջվող փաստաթղթեր
թ/ Գործակալություն է ներկայացնում քաղաքացիական կացության ակտերի գրանցման քանակական վիճակագրությունը և ամփոփումը.
ժ/ամփոփում և Գործակալություն է ներկայացնում քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների կազմված գործունեության վերաբերյալ հաշվետվությունները.
ի/ մասնակցում է իրավասու մարմիններից ստացված և վերջիններիս ուղարկվող հարցումների, միջնորդությունների, գրությունների քննարկման ընթացքին, հայցվող և ստացվող տեղեկությունների և փաստաթղթերի տրամադրման, հաղորդումների փաստաթղթաշրջանառության աշխատանքներին:

լ/ կատարում է աշխատակազմի քարտուղարի կողմից տրված այլ հանձնարարություններ, աշխատակազմի քարտուղարին կիսամյակը մեկ ներկայացնում է հաշվետվություն իր կատարած աշխատանքների մասին

լ/ ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

IV. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Առաջատար մասնագետին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության առաջին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան, ինչպես նաև՝ ավելի բարձր՝ Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության երրորդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ *Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2021թ. N 442-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԴՍՏԵՐ ԿՅԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱԿՏԸ ԵՎ ՎԵՃԻ ԷՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱՐԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ մասով, հաշվի առնելով ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ի. Բաղմանյանի կողմից գրությամբ ներկայացված պահանջը (մտից N 1584, 01.11. 2021 թ.) և հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 19.11.2021 թ. թիվ 17 արձանագրությունը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայացնել Ջերմուկի քաղաքի անչափահաս բնակիչ Ժաննա Մարտինի Բարսեղյանի (ծնված՝ 14.08.2015 թ.) և նրա մոր՝ Հասմիկ Սամվելի Ստեփանյանի կյանքի պայմանների հետազոտության ակտը՝ կազմված Ջերմուկ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից ս/թ նոյեմբերի 19-ին:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հետազոտության ակտի հիման վրա տալ եզրակացություն առ այն, որ

- *անչափահաս Ժաննա Մարտինի Բարսեղյանը մոր՝ Հասմիկ Ստեփանյանի հետ, 2019 թվականից ի վեր, վերադառնալով Ջերմուկ համայնք, բնակվել է մոր հետ համատեղ, և մինչև հոր՝ Մարտին Բարսեղյանի կողմից Մասիս քաղաք տարվելը, գտնվել է նրա խնամքի ներքո, ապրել են Հասմիկի մորը պատկանող՝ Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 43-րդ շենքի N 38 բնակարանում,*
- *Հասմիկ Ստեփանյանը, դստեր հետ համատեղ ապրելու ընթացքում անհրաժեշտ խնամք և հոգատարություն է իրականացրել նրա նկատմամբ, բնակարանային և կենցաղային պայմանները բավարար են:*
- *Հասմիկ Ստեփանյանը երեխային նախադպրոցական ուսումնական հաստատություն ուղարկելու և դպրոց հաճախելուն նախապատրաստելու նպատակով դիմել է «Ջերմուկ համայնքի «Ձատիկ» մանկապարտեզ» ՆՈՒՀ –ին, սակայն հոր կողմից երեխային տանելու փաստով պայմանավորված երեխան չի հաճախել մանկապարտեզ, իսկ ուսումնական տարվա մեկնարկին, լինելով դպրոցահասակ, չի հաճախում դպրոց: Այսինքն՝ դուրս է մնացել կրթությունից, ըստ Հասմիկ Ստեփանյանի՝ չի ստացել նաև բժշկական տարիքային պատվաստումները:*

Հաշվի առնելով թվարկված հանգամանքները՝ նպատակահարմար է, որ երեխայի խնամքն ու դաստիարակությունը իրականացնի մայրը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2021 նոյեմբերի 19
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 նոյեմբերի 2021թ. N 443-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԲՆԱԿԻՉ ՍԵՐՅՈԺԱ ԱՍԱՏՈՒՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետին, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 134-135-րդ հոդվածներին, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ և 37-րդ հոդվածներին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման դրույթներին համապատասխան՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի բնակիչ Սիրանույշ Բեգովի Հարությունյանի դիմումը (մտից՝ 2021 թվականի նոյեմբերի 11-ի N 1640) և Ջերմուկ համայնքի ղեկավարին կից գործող խնամակալության և հոգաբարձության հարցերով հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 18 արձանագրությանը կից եզրակացությունը՝ Ջերմուկ համայնքի անչափահաս բնակիչ Սերյոժա Ասատուրի Հովհաննիսյանի (ծնված՝ 2009 թվականի հուլիսի 28-ին) նկատմամբ սահմանել խնամակալություն՝ հաշվի առնելով նրա՝ առանց ծնողական խնամքի մնալու փաստը:

2. Սերյոժա Ասատուրի Հովհաննիսյանի խնամակալ նշանակել մոր կողմից տատին՝ Սիրանույշ Բեգովի Հարությունյանին (ծնված 17.05.1966 թ.):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սիրանույշ Բեգովի Հարությունյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2021 նոյեմբերի 22
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2021թ. N 444-Ա

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «Տելեկոմ Արմենիա» ՓԲ ընկերության կողմից լիազորված անձի 2021 թվականի նոյեմբերի 22-ի դիմումը՝ (մտից N 1700)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. «Տելեկոմ Արմենիա» ՓԲ ընկերությանը տալ Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող, ՓԲԸ-ին պատկանող բջջային կապի ցանցի արդիականացման աշխատանքներ կատարելու նախագծման թույլտվություն:
2. «Տելեկոմ Արմենիա» ՓԲ ընկերությունը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Տելեկոմ Արմենիա» ՓԲ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2021 նոյեմբերի24
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2021թ. N 445-Ա

«ԴՈՒՍՏՐ ՍՈԼԱՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «ԴՈՒՍՏՐ ՍՈԼԱՐ» ՍՊԸ–ի տնօրենի ս/թ նոյեմբերի 23-ի դիմումը (մտից N 1701)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. «ԴՈՒՍՏՐ ՍՈԼԱՐ» ՍՊ ընկերությանը Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղի Վառված սարի NN 12, 13, 14 և N 15 հասցեներում գտնվող հողամասերի վրա (կադաստրային ծածկագրերը՝ 10-028-0148-0069, 10-028-0148-0005, 10-028-0148-0063 և 10-028-0148-0064) 5 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման համար տալ շինարարության թույլտվություն:

2. «ԴՈՒՍՏՐ ՍՈԼԱՐ» ՍՊ ընկերությունը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԴՈՒՍՏՐ ՍՈԼԱՐ» ՍՊ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2021 նոյեմբերի 24
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2021թ. N 446-Ա

«ՍՈՒՆ ՍՈԼԱՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «ՍՈՒՆ ՍՈԼԱՐ» ՍՊԸ-ի տնօրենի ս/թ նոյեմբերի 23-ի դիմումը (մտից N 1702)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. «ՍՈՒՆ ՍՈԼԱՐ» ՍՊ ընկերությանը Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղի Վառված սարի N 5 և N 6 հասցեներում գտնվող հողամասերի վրա (կադաստրային ծածկագրերը՝ 10-028-0148-0010 և 10-028-0148-0011) 5 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման համար տալ շինարարության թույլտվություն:

2. «ՍՈՒՆ ՍՈԼԱՐ» ՍՊ ընկերությունը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՍՈՒՆ ՍՈԼԱՐ» ՍՊ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2021 նոյեմբերի 24
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2021թ. N 447-Ա

«ԱՐՄ ՍՈԼԱՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «ԱՐՄ ՍՈԼԱՐ» ՍՊԸ–ի տնօրենի ս/թ նոյեմբերի 23-ի դիմումը (մտից N 1703)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. «ԱՐՄ ՍՈԼԱՐ» ՍՊ ընկերությանը Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղի Վառված սարի NN 7, 8 և N 9 հասցեներում գտնվող հողամասերի վրա (կադաստրային ծածկագրերը՝ 10-028-0148-0062, 10-028-0148-0068 և 10-028-0148-0060) 5 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման համար տալ շինարարության թույլտվություն:

2. «ԱՐՄ ՍՈԼԱՐ» ՍՊ ընկերությունը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԱՐՄ ՍՈԼԱՐ» ՍՊ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2021 նոյեմբերի 24
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2021թ. N 448-Ա

«ԱՅ ՍՈԼԱՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «ԱՅ ՍՈԼԱՐ» ՍՊԸ-ի տնօրենի ս/թ նոյեմբերի 23-ի դիմումը (մտից N 1704)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. «ԱՅ ՍՈԼԱՐ» ՍՊ ընկերությանը Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղի Վառված սարի NN 16, 18 և N 19 հասցեներում գտնվող հողամասերի վրա (կադաստրային ծածկագրերը՝ 10-028-0148-0017, 10-028-0148-0061 և 10-028-0148-0067) 5 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման համար տալ շինարարության թույլտվություն:

2. «ԱՅ ՍՈԼԱՐ» ՍՊ ընկերությունը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԱՅ ՍՈԼԱՐ» ՍՊ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2021 նոյեմբերի 24
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2021թ. N 449-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 4/85 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ԴՈՒՌՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի, «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 27-րդ, 30-րդ, 31-րդ կետերի և 32-րդ կետի «բ» ենթակետի, 2020 թվականի հունիսի 4-ի 1023-Ն որոշմանը համապատասխան՝ հիմք ընդունելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Մ. Ա. Ազոյանի դիմումը (մտից N 1539, 21.10.2021 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Մեխակ Աշոտի Ազոյանին պատկանող (հիմք՝ 2020 թվականի հոկտեմբերի 30-ի N 3010020-10-0002 վկայական) Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 4/85 հասցեի ոչ բնակելի տարածքում շենքի արտաքին պատի հաշվին ինքնակամ բացված դուռը համարել օրինական:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նված ինքնակամ բացված դուռը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին. այն պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված է քաղաքաշինական նորմերի ու կանոնների պահպանմամբ, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի փոփոխվում Շահումյան փողոցի N 4 բազմաբնակարան շենքի սեփականատերերի բաժնային սեփականությունը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ բացված դռան օրինականացման համար տարածքի սեփականատերը պարտավոր է սույն որոշման ընդունման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում Ջերմուկի համայնքապետարանի 900365031583 հաշվեհամարին մուծել 3206 (երեք հազար երկու հարյուր վեց) դրամ, հակառակ դեպքում

Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետի «ե» ենթակետին համապատասխան սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մեխակ Աշոտի Ջազյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից: :

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2021 նոյեմբերի 29
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2021թ. N 450-Ա

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման, «Տելեկոմ Արմենիա» ՓԲ ընկերության կողմից լիազորված անձի 2021 թվականի նոյեմբերի 29-ի դիմումը՝ (մտից N 1726)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. «Տելեկոմ Արմենիա» ՓԲ ընկերությանը տալ Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող, ՓԲԸ–ին պատկանող բջջային կապի ցանցի արդիականացման աշխատանքներ կատարելու շինարարության թույլտվություն:

2. «Տելեկոմ Արմենիա» ՓԲ ընկերությունը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին մուծել 10000 (տաս հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

3. «Տելեկոմ Արմենիա» ՓԲ ընկերությունը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Տելեկոմ Արմենիա» ՓԲ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2021 նոյեմբերի 29
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2021թ. N 451-Ա

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՋԻՎԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին» N 79-Ն որոշման, հիմք ընդունելով Արմավիրի մարզի Հայկաշեն գյուղի բնակիչ Ջիվան Կարապետյանի՝ ս/թ նոյեմբերի 29-ի հայտը (մտից N 1727, 29.11.2021 թ.)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Արմավիրի մարզի Հայկաշեն գյուղի բնակիչ Ջիվան Կարապետյանին տալ Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Սայաթ Նովայի փողոցի N 44 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում բնակելի տուն կառուցելու շինարարության թույլտվություն:

2. Ջիվան Կարապետյանը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք, ինչպես նաև համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին մուծել 11250 (տասնմեկ հազար երկու հարյուր հիսուն) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ջիվան Կարապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2021 նոյեմբերի 29
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2021թ. N 452-Ա

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՋԻՎԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՁԵՂՆԱՀԱՐԿՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին» N 79-Ն որոշման, հիմք ընդունելով Արմավիրի մարզի Հայկաշեն գյուղի բնակիչ Ջիվան Կարապետյանի՝ ս/թ նոյեմբերի 29-ի հայտը (մտից N 1728, 29.11.2021 թ.)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Արմավիրի մարզի Հայկաշեն գյուղի բնակիչ Ջիվան Կարապետյանին տալ Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Սայաթ Նովայի փողոցի N 44 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում մեկ հարկանի ձեղնահարկով շինություն կառուցելու շինարարության թույլտվություն:

2. Ջիվան Կարապետյանը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք, ինչպես նաև համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին մուծել 11250 (տասնմեկ հազար երկու հարյուր հիսուն) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ջիվան Կարապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2021 նոյեմբերի 29
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2021թ. N 453-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի N 330-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով, հաշվի առնելով ՀՀ Կադաստրի կոմիտեի 25.11.2021 թ. Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N Կ–25112021-10-0225 որոշումը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 13-ի «Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղում գտնվող՝ իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» N 330-Ա որոշման մեջ կատարել լրացում՝ ավելացնել 2.1–ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«2.1. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված շինության և դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ սահմանազատված հողամասի՝ «ԱՓԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված հատակագիծը՝ ճանաչելով Արմեն Սավադի Խուրշուդյանի սեփականության իրավունքը փաստացի առկա սահմանազատված՝ կից ավել օգտագործվող 298,73 քմ հողամասի նկատմամբ՝ ի գիտություն ընդունելով, որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատարածքներում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակման օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2021 նոյեմբերի 30
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 դեկտեմբերի 2021թ. N 454-Ա

ՌՈԲԵՐՏ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺՆԵՄԱՍԸ
ՆՎԻՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Ռոբերտ Մխիթարի Այվազյանի դիմումը (մտից՝ 2021 թվականի նոյեմբերի 30-ի N 1737), հաշվի առնելով Ջերմուկ համայնքի ղեկավարին կից Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 30-ի N 19 արձանագրությունը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Թույլատրել Վարդանուշ Վոլոդյայի Այվազյանի կողմից լիազորված անձ Ռոբերտ Մխիթարի Այվազյանին կնքելու Վարդանուշ Այվազյանի խնամարկյալ Բաբկեն Սամվելի Դանիելյանին (ծնված՝ 17. 03. 1988 թ.) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2021 թվականի հոկտեմբերի 12-ի N 12102021-10-0008 վկայական) Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցի 12-րդ շենքի N 23 հասցեում գտնվող անշարժ գույքի՝ բնակարանի՝ Բաբկեն Դանիելյանին պատկանող բաժնեմասը (1/9) օտարելու՝ Մխիթար Վոլոդյայի Այվազյանին նվիրելու, գործարք:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռոբերտ Մխիթարի Այվազյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2021 դեկտեմբերի 1
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 դեկտեմբերի 2021թ. N 455-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 6-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 2/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 7-րդ հոդվածի 8-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 19-ի «Ջերմուկ համայնքի վարչական տարածքում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող՝ օրինականացված ինքնակամ կառույցները և դրանց պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասերը գնման նախապատվության իրավունքով կառույցն իրականացրած անձանց ուղղակի վաճառքի ձևով օտարելուն համաձայնություն տալու մասին» N 71-Ա որոշումների, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Ավետիք Գալուստի Գալստյանի դիմումները (մտից N 76՝ 22.01.2021 թ. և N 1733՝ 30.11.2021 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2021 թվականի նոյեմբերի 17-ի N 17112021-10-0004 վկայական) Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 6-րդ փողոցի N 2/2 հասցեում գտնվող 6,88 քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակը (արտաքին մակերեսը՝ 24 քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 24 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Ավետիք Գալուստի Գալստյանին:
2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով՝
   1) ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1100 (հազար հարյուր) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.11)
   2)առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 810 (ութ հարյուր տաս) դրամ:
4. Ավետիք Գալուստի Գալստյանը պարտավոր է վճարել՝
   1) համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին՝26400 (քսանվեց հազար չորս հարյուր) դրամ՝ ավտոտնակի գինը.
   2) համայնքապետարանի 900365031625 հաշվեհամարին՝19440 (տասնիննը հազար չորս հարյուր քառասուն) դրամ՝ հողամասի գինը

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Ավետիք Գալուստի Գալստյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ավետիք Գալուստի Գալստյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2021 դեկտեմբերի 1
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 դեկտեմբերի 2021թ. N 456-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի N 424-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2021 թվականի նոյեմբերի 2-ի «Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղում գտնվող՝ իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կարգավիճակի մասին» N 424-Ա որոշման ամբողջ տեքստում «Սուրեն» բառը և դրա հոլովաձևերը փոխարինել «Սուրիկ» բառով և դրա համապատասխան հոլովաձևերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2021 դեկտեմբերի 2
Ջերմուկ